



Համայնքի Անվարակելիություն

Եթե Լոս Անջելեսի Շրջանում բավարար թվով մարդիկ ստանան COVID-19 պատվաստանյութը, մենք կարող ենք հասնել համայնքի անվարակելիության: Դա կպաշտպանի ոչ միայն ձեզ, այլև ձեր ընտանիքը, ընկերներին և հարևաններին:



Ի՞նչ է համայնքի անվարակելիությունը, և ինչու՞ է այն կարևոր:

Համայնքի անվարակելիությունը (immunity), որը հայտնի է նաև որպես խմբային անվարակելիություն, այն է, երբ տարածաշրջանում բավականին թվով մարդիկ դառնում են վարակիչ հիվանդության հանդեպ անվարակունակ, ինչը դժվարացնում է վարակի փոխանցումը մարդուց մարդուն: Սրա հետևանքով ամբողջ համայնքն է դառնում պաշտպանված, այլ ոչ միայն անվարակունակ մարդիկ: Այս ճանապարհով ենք մենք դադարեցրել այնպիսի հիվանդությունների տարածումը, ինչպիսիք են պոլիոմիելիտը և կարմրուկը: Համայնքի անվարակելիությունը կարևոր է, քանի որ այն պաշտպանում է այն մարդկանց, ովքեր չեն կարող պատվաստվել, ինչպես նորածիններն ու փոքր երեխաները: Այն նաև օգնում է այն մարդկանց, ովքեր կարող են այնքան էլ լավ չարձագանքել պատվաստանյութին, ինչպիսիք են թույլ իմունային համակարգ ունեցողները:



Ինչպե՞ս պետք է հասնենք դրան:

Համայնքի անվարակելիությունը տեղի է ունենում, երբ բավարար թվով մարդիկ պատվաստվում են և/կամ երբ բավարար թվով մարդիկ են վարակվում և ապաքինվում և ստեղծում իմունային պատասխան (բնական անվարակելիություն): Թե բնակչության որ տոկոսը պետք է անվարակելի լինի, որպեսզի հասնենք համայնքի անվարակելիության, կախված է նրանից, թե որքան հեշտությամբ է հիվանդությունը փոխանցվում մի մարդուց մյուսին: Այն սովորաբար կազմում է բնակչության 70%-90%-ը:



COVID-19-ի համար մենք չենք կարող ապավինել բնական անվարակելիությանը, քանի որ՝

- Ավելի շատ մարդիկ կարող են հիվանդանալ կամ մահանալ մինչև համայնքի անվարակելիության հասնելը:
- Ցանկացած երկարաձգում մեծացնում է COVID-19-ի նոր տարբերակների արագ տարածման և ամրապնդվելու հավանականությունը:
- Բնական անվարակելիությունը կարող է բավական երկար չտևել կամ բավականաչափ ուժեղ չլինել, և մարդիկ կարող են նորից վարակվել:



Պատվաստվելը Լոս Անջելեսի Շրջանը պաշտպանելու ամենաարագ ձևն է:

Երբ բավարար թվով մարդիկ պատվաստվեն COVID-19-ի դեմ, վիրուսը չի կարող այդքան հեշտությամբ փոխանցվել մի մարդուց մյուսին, ինչը նշանակում է, որ ավելի քիչ հավանական է, որ մեր ամբողջ համայնքը հիվանդանա COVID-19-ով: Եթե պատահաբար մեկ մարդ հիվանդանում է, ապա ավելի քիչ է COVID-19-ի տարածման վտանգը, եթե վարակելու համար բավարար թվով մարդիկ չկան, ինչը հիվանդությունը դարձնում է հազվադեպ:



Կատարեք ձեր մասը՝ հնարավորինս շուտ պատվաստվեք:

- Պատվաստումը պաշտպանություն ստեղծելու ավելի անվտանգ տարբերակ է, քան COVID-19-ով վարակվելը:
- COVID-19 պատվաստանյութերը անվտանգ են և արդյունավետ:
- Պատվաստանյութը ստանալը կօգնի ձեզ և ձեր սիրելիներին ապահով պահել հիվանդությունից, աշխատանքից բացակայելուց, հիվանդանոցում հայտնվելուց կամ մահանալուց:

Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք www.VaccinateLACounty.com կամ զանգահարեք **833-540-0473** հեռախոսահամարով առավոտյան 8:00-ից երեկոյան 8:30-ը շաբաթը 7 օր ժամադրություններ նշանակելու հարցում աջակցության համար: